

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
16-Ի ԹԻՎ 1, 2-Ն-4-Ն ԵՎ 5 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 2-Ն որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի ոչ թե 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 8-րդ կետերին, այլ՝ 3-րդ, 5-րդ և 8-րդ մասերին:

Որոշմամբ հաստատված հավելվածի եկամտային մասում «8.Տեղական վճարներ» տողից հետո պետք է ավելացնել նոր 9-րդ «Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ» տող և «Ճշտված պլանով (դրամ)», «Փաստացի կատարված (դրամ) 2019 թվական» և «Կատարման %» սյունակներում համապատասխանաբար լրացնել «10264.2», «10264.2» և «100.0» թվերը: «Ընդամենը եկամուտներ» տողի «Ճշտված պլանով (դրամ)» և «Փաստացի կատարված (դրամ) 2019 թվական» սյունակներում նշված «48366.6» և «47910.1» թվերը փոխարինել «58630.8» և «58174.3» թվերով, ծախսային մասում «26.Պահուստային ֆոնդ 4891» տողից հետո պետք է ավելացնել նոր 26.1-րդ «Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներ» տող և «Ճշտված պլանով (դրամ)» ու «Փաստացի կատարված (դրամ) 2019 թվական» սյունակներում համապատասխանաբար լրացնել «3304.1» և «3304.1» թվերը, «32.Ընդամենը ֆոնդային ծախսեր» տողի «Ճշտված պլանով (դրամ)» սյունակի «19899.4» թիվը փոխարինել «19879.5» թվով, ծախսային մասի 1-26-րդ տողերի «Ընդհանուր բյուջեով (դրամ)» և «Ճշտված պլանով (դրամ)» սյունակներում նշված թվերի ընդհանուր հանրագումարը չի համապատասխանում «27.Ընդամենը վարչական ծախսեր» տողի «47863.7» և «48366.6» թվերին: Եկամտային և ծախսային մասերում «2018 թվականի փաստացի կատարված (դրամ)», «2018 թվականի կատարման %» և «2018 թվականի և 2019 թվականի համեմատականը» սյունակները լրացված չեն:

Թիվ 3-Ն որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և 3-րդ մասին:

Որոշման դրույթները սխալ են համարակալված: Որոշմամբ կատարված գումարային փոփոխություններով խախտվել է բյուջեի հավասարակշռությունը: Որոշման 3-րդ (ԾԱԽՍԱԶՅԻՆ ՄԱՍ) կետի «բ» ենթակետը անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը:

Թիվ 5 որոշման նախաբանում կատարված հղումը սխալ է: Անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 6-ի թիվ 8-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան կետին:

Որոշումներում տեղական ինքնակառավարման մարմինների անվանումներն անհրաժեշտ է գրառել ամբողջությամբ:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
03.03.2020թ.